

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

---

Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում  
Ազգային ստանդարտների մշակումը



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ

## Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ՀԱՍ 1.0-2013 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

### Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կողմից

2 ԸՆԴՈՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի «Ստանդարտացում» ստանդարտացման աշխատանքային կողմից:

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 57/1-Վ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N 1131-2013 առ 28.11.2013թ.

5 Սույն ստանդարտում իրացված են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները

6 ՀԱՍ 1.2-2008 ՓՈԽԱՐԵՆ

*Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում ([www.sarm.am](http://www.sarm.am)):*

**Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության**

## Բովանդակություն

1 Կիրառման ոլորտը.....	1
2 Նորմատիվ վկայակոչումները .....	1
3 Տերմինները և սահմանումները.....	2
4 Ընդհանուր դրույթները.....	2
5 Ստանդարտների մշակման, ընդունման և հաստատման կարգը.....	4
5.1 Ստանդարտի մշակման գործընթացի կազմակերպումը.....	4
5.2 Ստանդարտի նախագծի առաջին խմբագրության մշակումը և դրա հրապարակային քննարկումը.....	5
5.3 Ստանդարտի նախագծի վերջնական խմբագրության մշակումը և դրա փորձաքննությունը.....	7
6 Ստանդարտի նորացման կարգը .....	8
6.1 Ստանդարտի նորացման աշխատանքների կազմակերպումը.....	8
6.2 Ստանդարտի վերանայման կարգը.....	11
6.3 Ստանդարտում փոփոխություններ կատարելու կարգը .....	12
6.4 Ստանդարտում ուղղումներ կատարելու կարգը.....	14
7 Ստանդարտը չեղյալ հայտարարելու կարգը.....	14
Հավելված Ա .....	17
Հավելված Բ.....	30
Հավելված Գ .....	32
Հավելված Դ.....	34
Հավելված Ե.....	36
Հավելված Զ.....	38
Հավելված Է.....	40
Հավելված Ը.....	42



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

## Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում

### Ազգային ստանդարտների մշակումը

Стандартизация в Республике Армения

Разработка национальных стандартов

Standardization in the Republic of Armenia

Development of national standards

Գործարկման թվականը 01.01.2014

## 1 Կիրառման ոլորտը

1.1 Սույն ստանդարտով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների (այսուհետև՝ ստանդարտներ) մշակմանը, համաձայնեցմանը, ընդունմանը, հաստատմանը, նորացմանը (փոփոխությունների, ուղղումների կամ վերանայման միջոցով), ինչպես նաև չեղյալ հայտարարմանը ներկայացվող պահանջները:

Սույն ստանդարտի դրույթները ենթակա են կիրառման պետական մարմինների, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, գիտատեխնիկական, ինժեներական, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից:

1.2 Ռազմական արդյունաբերության արտադրանքի (աշխատանքի, ծառայության) վերաբերյալ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման հաստատման և կիրառման կարգը «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## 2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ ստանդարտները.

ՀԱՏ 1.0-2013 Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ

ՀԱՏ 1.1-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Տերմիններ և սահմանումներ

ՀԱՏ 1.5-2013 Ստանդարտացման ազգային համակարգ. Ստանդարտներ. Կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը, բովանդակությանը և նշագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

ՀԱՏ 1.6-2006 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման կանոններ և մեթոդներ

Պաշտոնական հրատարակություն

©SARM-Քոլոր իրավունքները պաշտպանված են

## **ՀԱՏ 1.2-2013**

ՀԱՏ 1.11-2002 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջպետական ստանդարտների մշակման և կիրառման կարգը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը՝ ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված ստանդարտների համապատասխան կատալոգի և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

### **3 Տերմինները և սահմանումները**

Սույն ստանդարտում կիրառված են տերմիններ ըստ ՀԱՏ 1.1 ստանդարտի:

### **4 Ընդհանուր դրույթները**

**4.1** Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների մշակումն իրականացնում են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ստանդարտացման նպատակներին հասնելու համար՝ նշված օրենքով սահմանված ստանդարտացման սկզբունքներին համապատասխան:

**4.2** Ստանդարտների մշակումն իրականացնում են ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները: Համապատասխան ոլորտում գործող տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում ստանդարտի մշակման համար ստեղծվում է շահագրգիռ կողմերից բաղկացած աշխատանքային խումբ:

**4.3** Ստանդարտացման ամենամյա ծրագիրը, տեխնիկական հանձնաժողովների և շահագրգիռ մարմինների առաջարկությունների հիման վրա, նախապատրաստում և հաստատում է ստանդարտացման ազգային մարմինը:

Ծրագրի մատչելիությունն ապահովելու նպատակով ծրագրի նախագիծը տեղադրվում է ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում ([www.sarm.am](http://www.sarm.am)):

**4.4** Ստանդարտների մշակումը, ընդունումը և հաստատումն իրականացվում է հետևյալ փուլերով.

- ստանդարտի նախագծի և (կամ) մշակման առաջարկի ներկայացում Ստանդարտացման ազգային մարմին.

- ստանդարտի մշակման գործընթացի կազմակերպում տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի միջոցով.

- նախագծի առաջին խմբագրության մշակում և դրա հրապարակային քննարկում.

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

- ազգային ստանդարտի նախագծի վերջնական (երկրորդ) խմբագրության հրապարակային քննարկում.

- ստանդարտի վերջնական նախագծի ընդունում տեխնիկական հանձնաժողովի (աշխատանքային խմբի) կողմից.

- Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության հիման վրա ստանդարտի ընդունում և հրապարակում:

**4.5** Ստանդարտներ մշակելիս ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով, ինչպես նաև այն ստանդարտներով և ստանդարտացման այլ նորմատիվ փաստաթղթերով, որոնք առնչվում են տվյալ օբյեկտի հետ:

**4.6** Ստանդարտներ մշակելիս կիրառում են ստանդարտացման տվյալ օբյեկտին վերաբերող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, փորձատեխնոլոգիական, նախագծային աշխատանքների, արտոնագրային հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների ազգային ստանդարտները, ստանդարտացման կանոնները, նորմերն ու հանձնարարականները և գիտության, տեխնիկայի ու տեխնոլոգիայի արդի նվաճումների մասին տեղեկությունները:

**4.6.1** Ստանդարտով սահմանվող պահանջները չպետք է հակասեն ստանդարտացման տվյալ օբյեկտին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենքների, տեխնիկական կանոնակարգերի և այլ իրավական ակտերի դրույթներին, ինչպես նաև նախկինում ընդունված և Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներին:

Եթե Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտների պահանջներն անբավարար կամ հնացած են և հակասում են մշակվող ստանդարտով սահմանվող պահանջներին, ապա նպատակահարմար է ստանդարտի նախագծի մշակման հետ միաժամանակ աշխատանքներ տանել գործող ստանդարտների նորացման (վերանայման կամ փոփոխության) ([ըստ 6-րդ բաժնի](#)) կամ չեղյալ հայտարարման ([ըստ 7-րդ բաժնի](#)) ուղղությամբ:

**4.6.2** Տեխնիկայի զարգացման մակարդակին և գիտատեխնիկական առաջընթացին մշակվող ստանդարտի համապատասխանությունը ստուգելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ստանդարտի նախագծի փորձաքննություն և գիտատեխնիկական մակարդակի գնահատում:

**4.7** Ստանդարտի նախագծի կառուցումը, շարադրումը, ձևավորումը, բովանդակությունը և նշագրումը՝ ըստ ՀԱՍ 1.5 ստանդարտի: Ստանդարտների նախագծերը և դրանց փոփոխությունները ձևավորում են էլեկտրոնային ձևով: Ընդ որում, օգտագործում են GHEA Grapat տառատեսակը:

## **5 Ստանդարտների մշակման, ընդունման և հաստատման կարգը**

### **5.1 Ստանդարտի մշակման գործընթացի կազմակերպումը**

**5.1.1** Ստանդարտի մշակմանը նախորդում է ստանդարտի մշակման համար առաջարկության նախապատրաստումը և ներկայացումը ստանդարտացման ազգային մարմին:

**5.1.2** Առաջարկություններ կարող են ներկայացնել պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տեխնիկական հանձնաժողովները, իրավաբանական և ֆիզիկական անձինք:

**5.1.3** Առաջարկությունում նշվում է ստանդարտի մշակման տեխնիկական, տնտեսական, սոցիալական նպատակահարմարության հիմնավորումը, տեխնիկական կանոնակարգի և (կամ) միջազգային ստանդարտի կամ այլ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթի հետ դրա կապի մասին տեղեկատվությունը, հնարավոր ֆինանսավորման աղբյուրները, պատվիրատուի, մշակողի և համակատարողների մասին տեղեկությունները, ստանդարտի մշակման մոտավոր արժեքը, ինչպես նաև ստանդարտի մշակման ավարտի վերաբերյալ ժամկետը:

Առաջարկությունում կարող են ընդգրկվել տեղեկություններ՝

- նոր ստանդարտի մշակման վերաբերյալ,
- միջազգային և տարածաշրջանային ստանդարտը որպես ազգային ստանդարտի մշակման հիմք կիրառելու վերաբերյալ՝ ՀՍՏ 1.6 ստանդարտին համապատասխան, նշելով կիրառման մեթոդը և եղանակը,
- գործող ստանդարտի վերանայման վերաբերյալ,
- գործող ստանդարտներում լրացումներ, փոփոխություններ և (կամ) ուղղումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

Առաջարկությունների հետ միասին Ստանդարտացման ազգային մարմին կարող է ներկայացվել նաև ստանդարտի նախնական նախագիծը:

**5.1.4** Առաջարկությունների նախապատրաստումը և քննարկումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի նախապատրաստումը, ձևավորումը իրականացվում է Ա հավելվածին համապատասխան:

**5.1.6** Ստանդարտացման ազգային մարմինը քննարկում է ստացված առաջարկությունը, ստուգում է դրանում տրված փաստարկների հիմնավորվածությունը, գնահատում է ստանդարտի մշակման արդիականությունը կամ Հայաստանի Հանրապետությունում գործարկման նպատակահարմարությունը և իր որոշման մասին հայտնում է առաջարկությունը ներկայացնողին:



**5.1.5** Ստանդարտի մշակման ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրով կամ որոշակի ստանդարտի մշակման համար կնքված պայմանագրով:

**5.2 Ստանդարտի նախագծի առաջին խմբագրության մշակումը և դրա հրապարակային քննարկումը**

**5.2.1** Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը, ստանդարտացման ամենամյա ծրագրին (պայմանագրին) համապատասխան, նախապատրաստում է ստանդարտի նախագիծը: Ստանդարտի նախագծի մշակման հետ միաժամանակ կազմում է դրա պարզաբանումը՝ ըստ Բ հավելվածի:

Ստանդարտացման համալիր օբյեկտների համար միաժամանակ մի քանի ստանդարտի մշակման, գնահատման, համաձայնեցման և ընդունման նախապատրաստելու դեպքում թույլատրվում է կազմել մեկ պարզաբանում:

**5.2.2.1** Ստանդարտի նախագծի մշակման ժամանակ ղեկավարվում են ստանդարտացման տվյալ օբյեկտի վրա տարածվող օրենսդրությամբ, այդ թվում՝ տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներով, ՀԱՍ 1.0 ստանդարտի դրույթներով, ինչպես նաև ՀԱՍ 1.5 (7-րդ բաժին) ստանդարտով՝ ստանդարտի բովանդակությանը ներկայացվող պահանջներով:

**5.2.2.2** Ստանդարտի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը և կանոնները,
- ստանդարտացման տվյալ օբյեկտին վերաբերող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, փորձատեխնոլոգիական, նախագծային աշխատանքների արդյունքները,
- միջազգային, տարածաշրջանային (եվրոպական, միջպետական) ստանդարտները, միջազգային, տարածաշրջանային նորմերը, կանոնները, հանձնարարականները և այլ փաստաթղթերը
- հայրենական և այլ պետությունների գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի ժամանակակից նվաճումների վերաբերյալ տեղեկատվությունը,
- ստանդարտի մշակմանը շահագրգիռ պետական մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց առաջարկությունները:

**5.2.2.3** Արտոնագրային կամ հեղինակային իրավունքի օբյեկտին վերաբերող փաստաթղթերի օգտագործման ժամանակ պահպանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան դրույթները: Այդ դեպքում անհրաժեշտ տեղեկությունը տրվում է ստանդարտի նախաբանում և (կամ) պարզաբանման մեջ:

**5.2.2.4** Ստանդարտի մշակման ժամանակ որպես հիմք միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտի կիրառման դեպքում հաշվի են առնում ՀԱՍ 1.6 ստանդարտով սահմանված դրույթները:

## ՀԱՏ 1.2-2013

**5.2.3** Եթե ստանդարտի նախագիծը նույնական է միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտին կամ ձևափոխված է դրա նկատմամբ, ապա տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը (Ստանդարտների ազգային ինստիտուտը) գնահատում է ներդաշնակման տվյալ ձևի ընտրության հիմնավորումը:

**5.2.4** Ստանդարտի նախագծի մշակումն ավարտվում է՝ տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կողմից ստանդարտի նախագիծը պարզաբանման հետ միասին Ստանդարտների ազգային ինստիտուտ ներկայացնելով՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ ինտերնետային կայքում ([www.sarm.am](http://www.sarm.am)) տեղադրելու և հրապարակային քննարկման համար:

**5.2.6** Տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի միջոցով նախապատրաստված ստանդարտի նախագիծը քննարկվում է տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի անդամների կողմից նիստերի կամ նամակագրության միջոցով:

**5.2.9** Ստանդարտի նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները պետք է լինեն հիմնավորված և շարադրվեն հետևյալ հաջորդականությամբ.

- ամբողջությամբ նախագծի վերաբերյալ,
- բաժինների, ենթաբաժինների, կետերի, ենթակետերի, հավելվածների վերաբերյալ՝ ըստ դրանց շարադրման հաջորդականության:

Ստանդարտի նախագծի առաջին խմբագրություն վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները ուղարկվում ստանդարտի նախագիծը հրապարակային քննարկման դնելու օրվանից 60 օրվա ընթացքում, եթե մշակողի կողմից այլ ժամկետ սահմանված չէ:

Տեխնիկական հանձնաժողովի կողմից միջազգային ստանդարտներին ներդաշնակ՝ հավանության մեթոդով ընդունվող ազգային ստանդարտները համաձայնեցման չեն ուղարկվում:

Սահմանված ժամկետից ուշ ուղարկված դիտողությունները և առաջարկությունները քննարկվում և ստանդարտի նախագծի կարծիքների ամփոփագրի մեջ ներառվում են տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի հայեցողությամբ:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** Ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման ժամկետը սահմանվում է՝ հաշվի առնելով նշված ծանուցումների հրապարակման համար տրամադրված ժամկետները, ստանդարտի նախագծի մշակման մասին ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում ծանուցման տեղադրման օրվանից մինչև հրապարակային քննարկման ավարտի մասին ծանուցման հրապարակման օրը՝ 2 ամսից ոչ ավելի:

### 5.3 Ստանդարտի նախագծի վերջնական խմբագրության մշակումը և դրա փորձաքննությունը

**5.3.1** Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը ստանդարտի լրամշակված նախագծի հրապարակային քննարկման արդյունքների հիման վրա նախապատրաստում է ստանդարտի նախագծի վերջնական (երկրորդ) խմբագրությունը:

**5.3.2** Ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման ավարտի մասին ծանուցման հրապարակման օրվանից հետո ստանդարտի նախագծի վերջնական խմբագրությունը և շահագրգիռ մարմիններից ստանդարտի նախագծի առաջին խմբագրության վերաբերյալ ստացված գրավոր կամ էլեկտրոնաթվային տեսքով դիտողություններն ու առաջարկությունները՝ ներառված կարծիքների ամփոփագրում (հավելվածներ Ե և Ձ), ինչպես նաև լրամշակված պարզաբանումը պետք է տեղադրվեն ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում:

**5.3.2.1** Լրամշակված ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման արդյունքները կարող են ներկայացվել խորհրդակցության (նիստի) արձանագրության տեսքով կամ շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների համապատասխան գրություններով: Լրամշակված ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման արդյունքների վերաբերյալ տվյալները կարող են նաև արտացոլվել ստանդարտի նախագծի առաջին խմբագրության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ կարծիքների ամփոփագրում, եթե այդ քննարկման արդյունքները վերաբերում են տվյալ ամփոփագրում տրված որոշակի դիտողություններին և առաջարկություններին:

**5.3.2.2** Ստանդարտի նախագծի վերջնական խմբագրության վերաբերյալ էական տարածայնությունների առկայության դեպքում, տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը կազմակերպում է դրա քննարկումը՝ խորհրդակցությունում (նիստում):

**5.3.2.3** Քննարկման արդյունքների հիման վրա տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը լրամշակում է ստանդարտի նախագծի վերջնական խմբագրությունը, ճշտում պարզաբանումը և որոշում է ընդունում Ստանդարտների ազգային ինստիտուտ ներկայացնելու մասին: Ընդունված որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:

**5.3.3** Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը Ստանդարտների ազգային ինստիտուտ է ներկայացնում՝

- ստանդարտի նախագծի վերջնական խմբագրությունը՝ երկու օրինակից, որոնցից մեկը պետք է լինի թղթե, մյուսը՝ և էլեկտրոնային կրիչի վրա,
- ստանդարտի նախագծի վերաբերյալ կարծիքների ամփոփագիրը (առկայության դեպքում),
- լրամշակված ստանդարտի նախագծի քննարկման խորհրդակցության (նիստի) արձանագրությունը:

## **ՀԱՏ 1.2-2013**

**5.3.4** Ստանդարտացման ազգային մարմինը ստուգում է տեխնիկական հանձնաժողովից կամ աշխատանքային խմբից ընդունման ներկայացված ստանդարտի նախագծի վերջնական խմբագրության և կից փաստաթղթերի լրակազմի լրիվությունը՝ ըստ 5.3.3-ի:

**5.4.10** Ստանդարտի նախագծի և կից փաստաթղթերի քննարկման դրական արդյունքների դեպքում ստանդարտացման ազգային մարմինը որոշում է ընդունում ստանդարտի հաստատման և այն Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու ժամկետի մասին:

Ստանդարտը հաստատվում և գործողության մեջ է դրվում ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով: Հրամանի ձևը տրված է Է հավելվածում:

Ստանդարտի հաստատման ժամանակ սահմանվում է ստանդարտի գործարկման թվականը՝ հաշվի առնելով ստանդարտի ներդրման նախապատրաստական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ ժամանակը:

Այն ստանդարտի գործարկման թվականը, որում վկայակոչված են նոր ընդունված ստանդարտներ, սահմանվում է այդ ստանդարտների գործարկման թվականից ոչ շուտ: Ստանդարտը հաստատում են առանց գործողության ժամկետի սահմանափակման:

**5.4.14** Գրանցված ստանդարտների մասին տեղեկատվությունը հրատարակում է Ստանդարտների ազգային ինստիտուտը: Այդ տեղեկատվությունը տեղադրվում է նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում:

**5.4.15** Ստանդարտների հրատարակումը (բազմացումը) և տարածումն իրականացնում է Ստանդարտների ազգային ինստիտուտը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**5.4.17** Հաստատված ստանդարտի բնօրինակի պահման համար կազմվում է ստանդարտի գործ, որում ընդգրկում են հետևյալ փաստաթղթերը.

- հաստատված ստանդարտի բնօրինակը,
- ստանդարտի նախագծի կարծիքների ամփոփագրերը (դրանց առկայության դեպքում),
- ստանդարտի հաստատման հրամանի պատճենը,
- տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի նիստի արձանագրությունը
- հանձնման-ընդունման թերթիկը

Յուրաքանչյուր ստանդարտի գործ պետք է համարակալվի և պահվի էլեկտրոնային և թղթային կրիչների վրա:

## **6 Ստանդարտի նորացման կարգը**

### **6.1 Ստանդարտի նորացման աշխատանքների կազմակերպումը**

**6.1.1** Ստանդարտը ենթակա է նորացման հետևյալ դեպքերում.

**©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են**

- եթե դրա բովանդակությունը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին, տեխնիկական կանոնակարգերին, ազգային ստանդարտացման սկզբունքներին և նպատակներին, որի հետևանքով չի բավարարում երկրի ժամանակակից տնտեսական, սոցիալական և այլ պահանջմունքները, այդ թվում՝ չի համապատասխանում գիտության և տեխնիկայի մակարդակին,

- եթե դրա բովանդակությունը խոչընդոտում է նոր կնքված միջազգային համաձայնագրի պայմանների կատարմանը,

- եթե դրա բովանդակությունը հակասում է նոր մշակվող կամ այլ նորացվող Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտի (այդ թվում՝ որպես ազգային ստանդարտ կիրառվող միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտի) բովանդակությանը, կամ եթե այդ ստանդարտները կրկնում են իրար:

**6.1.2** Գործող ստանդարտի նորացումը կարող է իրականացվել դրա վերանայման, ստանդարտի փոփոխության մշակման, իսկ բացառիկ դեպքերում (վրիպակների, սխալների կամ այլ անճշտությունների առկայության դեպքում)՝ ստանդարտում ուղղումներ կատարելու միջոցով:

**6.1.3** Ստանդարտի նորացման անհրաժեշտության դեպքում տվյալ ոլորտի տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի անդամները, Ստանդարտների ազգային ինստիտուտ են ուղարկում համապատասխան առաջարկություն (հիմնավոր փաստարկներով և տվյալ աշխատանքների կատարման համար ֆինանսավորման վերաբերյալ առաջարկություններով), ինչպես նաև ստանդարտում կատարվելիք փոփոխության տեքստի նախագիծը:

**6.1.4** Տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը քննարկում, վերլուծում և ընդհանրացնում է ստանդարտի վերանայման վերաբերյալ ստացված առաջարկությունները, գնահատում է դրանց արդիականությունը, որոշում է նորացման ձևը (վերանայում կամ փոփոխություն):

**6.1.5** Եթե ստանդարտի հաստատումից հետո հինգ տարվա ընթացքում տվյալ ոլորտի տեխնիկական հանձնաժողովի կողմից առաջարկություն չի ստացվել ստանդարտի նորացման վերաբերյալ, ապա տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը իրականացնում է տվյալ ստանդարտի ստուգումը կամ տեխնիկական հանձնաժողովի անդամներին, շահագրգիռ մարմիններին հարցում է ուղղում ստանդարտի ստուգման և առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ:

Ստանդարտի ստուգումն իրականացնում են դրա նորացման անհրաժեշտության հայտնաբերման նպատակով, որը կարող է ուղղված լինել.

- մշակվող տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության գործող և գործարկման մեջ դրվող նորմերի հետ հակասության վերացմանը,
- նոր կնքված միջազգային համաձայնագրերին ստանդարտի համապատասխանեցմանը,

## ՀԱՍ 1.2-2013

- միջազգային և (կամ) տարածաշրջանային մակարդակով ստանդարտի ներդաշնակմանը,

- առաջատար փորձի տարածմանը, գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման մակարդակին, բնակչության, տնտեսության և պետության անվտանգության պահանջներին համապատասխան արտադրանքի (աշխատանքի կամ ծառայության) որակի բարձրացմանը,

- ազգային ստանդարտացման նպատակների առավել լրիվ բավարարմանը,

- նոր մշակվող, վերանայվող և փոփոխվող Հայաստանի Հանրապետության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության տարածքում որպես ազգային ստանդարտներ գործող միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտների հետ հակասության կամ կրկնության վերացմանը,

- չեղյալ հայտարարված ստանդարտների վկայակոչումների վերացմանը:

**6.1.6** Սույն ստանդարտի 6.1.4 և 6.1.5-ում նշված աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է գնահատվել նորացվող ստանդարտի հետ փոխկապակցված այլ ստանդարտների (այդ թվում՝ տվյալ ստանդարտում վկայակոչված ստանդարտների) միաժամանակյա նորացման անհրաժեշտությունը:

**6.1.6.1** Եթե վերլուծության ընթացքում հայտնաբերվել է այլ նորացվող ստանդարտի հետ փոխկապակցված ստանդարտի նորացման անհրաժեշտությունը, ապա համապատասխան առաջարկությունն ուղարկում են ստանդարտացման ազգային մարմին:

**6.1.6.2** Նման առաջարկություն ստացած տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի քարտուղարությունը վերլուծում է այն, որոշում է նորացման եղանակը (փոփոխության կամ վերանայման ձևով), ինչպես նաև այդ աշխատանքի ֆինանսավորման:

**6.1.6.3** Ստանդարտների ազգային ինստիտուտը քննարկում է տարբեր տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունները, որոշում է ընդունում նրանց կողմից իրականացվող աշխատանքների համաձայնեցման (կոորդինացման) մասին և այդ մասին տեղյակ է պահում համապատասխան տեխնիկական հանձնաժողովների քարտուղարություններին:

**6.1.7** Անհրաժեշտության դեպքում Ստանդարտների ազգային ինստիտուտը կարող է կազմակերպել գործող ստանդարտների ազգային ֆոնդի որոշակի մասի վերլուծություն՝ դրանում ընդգրկված ստանդարտների գիտատեխնիկական մակարդակի գնահատման միջոցով դրա նորացման նպատակով:

Ստանդարտի վերլուծության արդյունքների հիման վրա նախապատրաստվում են առաջարկություններ՝ առանց նորացման դրա հետագա կիրառման նպատակահարմարության կամ այն նորացնելու կամ չեղյալ հայտարարելու մասին:

**6.1.8** Գործող ստանդարտի վերանայման կամ տվյալ ստանդարտի փոփոխության մշակման հետագա աշխատանքներն իրականացնում են 6.2, 6.3 կամ 6.4-ով սահմանված կարգով:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

## 6.2 Ստանդարտի վերանայման կարգը

**6.2.1** Ստանդարտի վերանայումն իրականացնում են դրա բովանդակության, կառուցվածքի զգալի փոփոխությունների և (կամ) անվանման փոփոխության, ինչպես նաև ստանդարտում նոր և (կամ) առավել առաջադեմ պահանջներ սահմանելու դեպքում, եթե դրանք հանգեցնում են նոր արտադրանքի և գործող ստանդարտին համապատասխան թողարկվող արտադրանքի համափոխարինելիության խախտմանը և (կամ) արտադրանքի որակի հիմնական ցուցանիշների փոփոխմանը:

**6.2.2** Ստանդարտի վերանայման դեպքում գործող ստանդարտի փոխարեն մշակվում է նորը: Ընդ որում, գործող ստանդարտը չեղյալ է հայտարարվում, իսկ նոր ստանդարտի նախաբանում նշվում է, թե որ ստանդարտի փոխարեն է այն մշակվել: Նոր ստանդարտին տրվում է հին ստանդարտի նշագիրը՝ փոխելով ընդունման տարեթիվը:

**6.2.3** Շահագործման մեջ գտնվող նախկինում արտադրված արտադրատեսակների նորոգման և պահեստամասերի պատրաստման անհրաժեշտության դեպքում, որոշակի արտադրանքի ստանդարտի վերանայման ժամանակ (ըստ նոր և գործող ստանդարտներով արտադրվող արտադրանքների համափոխարինելիության խախտման դեպքում) գործող ստանդարտը չեղյալ չեն հայտարարում: Այդ դեպքում մշակողը նախապատրաստում է գործող ստանդարտի փոփոխության մասին նախագիծ, որով ստանդարտի «Կիրառման ոլորտը» բաժնում ավելացնում են հետևյալ բովանդակությամբ լրացում.

«Սույն ստանդարտը կիրառելի է միայն պահեստամասերի պատրաստման և շահագործման մեջ գտնվող արտադրատեսակների նորոգման համար»

**6.2.4** Վերանայված նոր ստանդարտի մշակման դեպքում, դրա մշակումը, հաստատումը, պետական գրանցումը, հրատարակումը, և գործողության մեջ դնելն իրականացնում են 5-րդ բաժնով սահմանված կարգով: Վերանայված ստանդարտի մշակմանը ներգրավում են գործող ստանդարտը մշակող տեխնիկական հանձնաժողովին կամ աշխատանքային խմբին:

Ստանդարտի վերանայման դեպքում միաժամանակ նախապատրաստում են առաջարկություններ փոխկապակցված նորմատիվ փաստաթղթերի վերանայման կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**6.2.5** Նորացված ստանդարտի նախագծի պարզաբանման մեջ նշում են գործող ստանդարտի նորացման նպատակահարմարության տեխնիկատնտեսական, սոցիալական կամ այլ հիմնավորումը և նորացման համառոտ բնութագիրը, ինչպես նաև գործող ստանդարտի փոխարեն նորացված ստանդարտի կիրառման սպասվելիք արդյունավետությունը:

**6.2.6** Գործող ստանդարտը նորով փոխարինելու և նորացված ստանդարտի հաստատման մասին տեղեկատվությունը հրապարակվում է ստանդարտների տեղեկատուում և տեղադրվում է ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում:

**6.3 Ստանդարտում փոփոխություններ կատարելու կարգը**

**6.3.1** Ստանդարտի փոփոխություններ մշակում են ստանդարտի առանձին պահանջների փոխարինման, ավելացման կամ հանման դեպքում:

**6.3.2** Արտադրանքի ստանդարտի փոփոխություններ մշակում են նոր, առավել առաջադեմ պահանջներ սահմանելու դեպքում, որոնք չեն հանգեցնում նոր արտադրանքի և գործող ստանդարտին համապատասխան թողարկվող արտադրանքի համափոխարինելիության և համատեղելիության խախտմանը:

Փորձարկման մեթոդի ստանդարտի փոփոխություն մշակում են, եթե կատարվող փոփոխությունը չի ազդում տվյալ մեթոդի օգտագործմամբ ստացված փորձարկումների (չափումների, վերլուծությունների, որոշումների) արդյունքների բաղդատման վրա:

Ստանդարտների մնացած տեսակների համար փոփոխություն մշակվում է, եթե դրա ծավալը չի գերազանցում ստանդարտի ծավալի 20 %-ը:

**6.3.3** Միջազգային, տարածաշրջանային ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների հիման վրա մշակված ազգային ստանդարտի փոփոխությունները, բացի 6.3.2-ում նշված դեպքերից մշակում են նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների նոր փոփոխությունների առկայության դեպքում:

**6.3.4** Ստանդարտի փոփոխություն մշակում են նաև, եթե ստանդարտում վկայակոչված են չեղյալ հայտարարված ստանդարտներ: Ընդ որում՝ ստանդարտի այն դրույթը, որտեղ տրված է այդ վկայակոչումը, հանում են կամ ձևափոխում են՝ ընդգրկելով անհրաժեշտ պահանջը (կանոնը):

Եթե ինչ-որ պատճառով ստանդարտում չի կատարել նորմատիվ վկայակոչումների հետ կապված փոփոխություն, ապա ստանդարտն օգտագործողն ինքն է իրականացնում վկայակոչված չեղյալ հայտարարված ստանդարտների փոխարեն գործող ստանդարտների որոնումը:

Եթե վկայակոչված ստանդարտը չեղյալ է հայտարարված առանց փոխարինելու կամ կորցրել է Հայաստանի Հանրապետությունում ազգային մակարդակով գործելու ուժը, ապա այն դրույթը (կամ դրա մասը), որում այն վկայակոչված է, կարող է չկիրառվել:

**6.3.5** Ստանդարտում կատարվող միայն խմբագրական և (կամ) վկայակոչման բնույթի փոփոխությունները որպես ինքնուրույն փաստաթուղթ չեն մշակում: Նման փոփոխությունները ներառում են արտադրանքի (ծառայության) որակին ներկայացվող պահանջների փոխարինմամբ (ավելացումով, հանումով) պայմանավորված փոփոխության մեջ, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման կանոնների, նորմերի և հանձնարարականների կամ այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման հետ կապված փոփոխության մեջ, կամ ձևակերպում են որպես ուղղում (6.4):



**6.3.6** Եթե ստանդարտում արդեն կատարվել է երեք փոփոխություն, ապա հետագա փոփոխություն չեն մշակում, այլ իրականացնում են ստանդարտի վերանայում՝ ըստ 6.2-ի: Ստանդարտի վերանայումը գերադասելի է նաև այն դեպքում, երբ փոփոխության ծավալը գերազանցում է ստանդարտի տեքստի 20 %-ը կամ եթե անհրաժեշտ է ստանդարտի անվանման կամ կիրառման ոլորտի էական փոփոխություն:

**6.3.7** Փոփոխությունների կառուցումը, շարադրումը ըստ ՀԱՏ 1.5 ստանդարտի (5-րդ բաժին):

**6.3.8** Ստանդարտի փոփոխության նախագծի վերաբերյալ ծանուցումը ձևակերպում են Գ հավելվածին համապատասխան: Ստանդարտի փոփոխության նախագծի հրապարակային քննարկման ժամկետը սահմանում է մշակողը՝ կախված տվյալ փոփոխության առանձնահատկությունից և նշում է այն ծանուցման մեջ: Այդ ժամկետը պետք է լինի մեկ ամսից ոչ պակաս:

**6.3.9** Ստանդարտում կատարվող փոփոխությունների մշակումը, համաձայնեցումը իրականացնում են 4-րդ և 5-րդ բաժիններում ստանդարտների նախագծերի համար սահմանված կարգով, հաշվի առնելով սույն բաժնի պահանջները:

**6.3.10** Ստանդարտի փոփոխություն մշակելիս, միաժամանակ նախապատրաստում են առաջարկություններ փոխկապակցված նորմատիվ փաստաթղթերի փոփոխությունների վերաբերյալ: Այդ դեպքում ստանդարտի փոփոխության մշակման աշխատանքներին ընդգրկում են տվյալ ստանդարտը մշակող անձանց:

**6.3.12** Ստանդարտի փոփոխության նախագիծը հաստատման համար ուղարկում են ստանդարտացման ազգային մարմին ոչ ուշ, քան փոփոխությունը գործողության մեջ դնելու ենթադրյալ թվականից 6 ամիս առաջ:

Ստանդարտացման ազգային մարմինը ստանդարտի փոփոխության նախագիծն ընդունման է նախապատրաստում 5-րդ բաժնում ստանդարտների համար սահմանված կանոններին համապատասխան՝ հաշվի առնելով սույն ենթաբաժնում սահմանված կանոնները:

**6.3.13** Ստանդարտում կատարված յուրաքանչյուր փոփոխությանը դրա մշակողը տալիս է հերթական համար: Փոփոխությունը գործողության մեջ դնելու թվականը ստանդարտացման ազգային մարմինը սահմանում է փոփոխության հաստատման օրվանից հետո երեք ամսից ոչ շուտ:

Ստանդարտի փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

**6.3.14** Ստանդարտում կատարված փոփոխության մասին տեղեկատվությունը և այդ փոփոխության տեքստը ստանդարտների ազգային ինստիտուտը հրատարակում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում և տեղադրում է ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում:

## **ՀԱՏ 1.2-2013**

6.3.15 Ստանդարտի վերահրատարակման ժամանակ ստանդարտի տեքստում ներառում են նախկինում կատարած փոփոխությունները՝ կատարելով համապատասխան նշում:

**6.3.16** Ստանդարտի օրինակներում փոփոխության մտցնումն իրականացնում են Ը հավելվածում տրված կարգին համապատասխան:

**6.3.17** Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ստանդարտների պաշտոնական օրինակների օգտագործումը, օրինակ՝ տվյալ ստանդարտի պահանջներին համապատասխանության հավաստման, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման, պայմանագրերի և համաձայնագրերի կնքման, արժիտրաժային վեճերի, դատաքննության և արտադրանք արտադրողների ու սպառողների, ծառայություններ մատուցողների և պատվիրատուների և այլնի միջև տարաձայնությունների լուծման այլ ձևերի դեպքերում, ինչպես նաև գրադարաններում և գիտատեխնիկական տեղեկատվության մարմիններում, հարկավոր է օգտագործել ստանդարտների այն օրինակները, որոնցում փոփոխությունները մտցված են Ը հավելվածով սահմանված կարգով:

**6.3.18** Մնացած դեպքերում օգտվողի մոտ գտնվող ստանդարտի օրինակներում փոփոխություններ մտցնելու եղանակները որոշում են իրենք՝ օգտվողները:

### **6.4 Ստանդարտում ուղղումներ կատարելու կարգը**

6.4.1 Հրատարակված (բազմացված) ստանդարտում ուղղումներ կատարելու անհրաժեշտության դեպքում ստանդարտից ցանկացած օգտվող կարող է համապատասխան տեխնիկական հանձնաժողովի քարտուղարություն (տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ) ուղարկել առաջարկություն՝ ստանդարտում ուղղում մտցնելու վերաբերյալ:

**6.4.2** Տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը քննարկում է տվյալ առաջարկությունը և դրա հետ համաձայն լինելու դեպքում կազմում է զեկուցագիր և ուղարկում Ստանդարտների ազգային ինստիտուտ:

**6.4.3** Ստանդարտի ուղղումը ձևակերպում և հաստատում են ՀԱՏ 1.5 ստանդարտին համապատասխան:

**6.4.4** Ստանդարտի ուղղումը հաշվի են առնում տվյալ ստանդարտը վերահրատարակելու դեպքում: Ստանդարտի ուղղման տեքստը հրատարակում է Ստանդարտների ազգային ինստիտուտը՝ «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվում: Այդ տեղեկատվությունը տեղադրվում է նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում:

## **7 Ստանդարտը չեղյալ հայտարարելու կարգը**

**7.1** Ստանդարտը չեղյալ է հայտարարում ստանդարտացման ազգային մարմինը: Գործող ստանդարտը չեղյալ են հայտարարում հետևյալ դեպքերում.

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

ա) տվյալ ստանդարտի փոխարեն այլ ստանդարտի մշակման, այդ թվում՝ տվյալ ստանդարտի դրույթներն այլ ստանդարտի մեջ ներառման,

բ) Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման նույն օբյեկտի վրա տարածվող միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտի ընդունման և գործարկման,

գ) ստանդարտին համապատասխան արտադրանքի թողարկման (աշխատանքի կատարման, ծառայության մատուցման) դադարեցման,

դ) այլ դեպքերում, երբ կապված տվյալ ոլորտում ազգային ստանդարտացման աշխատանքների ուղղության փոփոխության հետ՝ ստանդարտը կորցրել է իր արդիականությունը:

**7.2** Ստանդարտի չեղյալ հայտարարումն իրականացնում են շահագրգիռ անձանց կարծիքներն առավելագույնս հաշվի առնելով:

**7.3** Եթե ստանդարտը չեղյալ են հայտարարում 7.1-ի «ա» և «բ»-ում նշված դեպքերում, ապա շահագրգիռ անձանց կողմից չեղյալ հայտարարման հնարավորության քննարկումն իրականացնում են չեղյալ հայտարարվող ստանդարտի փոխարեն մշակվող ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման հետ միաժամանակ:

**7.4** Եթե ստանդարտը չեղյալ են հայտարարում 7.1-ի «գ» և «դ»-ում նշված դեպքերում, ապա շահագրգիռ կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական անձինք ստանդարտի չեղյալ հայտարարման մասին հիմնավորված առաջարկություն են ուղարկում տվյալ ոլորտի տեխնիկական հանձնաժողովի քարտուղարություն (տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում՝ ստանդարտացման ազգային մարմին):

**7.5** Տեխնիկական հանձնաժողովի քարտուղարությունը կազմակերպում է ստանդարտի չեղյալ հայտարարելու վերաբերյալ առաջարկության քննարկումը տվյալ տեխնիկական հանձնաժողովի անդամների կողմից և հրապարակային քննարկումը՝ Գ հավելվածին համապատասխան ծանուցման պատրաստման և ստանդարտացման ազգային մարմին ուղարկելու միջոցով: Ստանդարտացման ազգային մարմինը հրապարակային քննարկման վերաբերյալ ծանուցումը տեղադրում է ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի ինտերնետային կայքում: Ստանդարտի չեղյալ հայտարարման վերաբերյալ առաջարկության հրապարակային քննարկման ժամկետը պետք է լինի երկու ամսից ոչ պակաս:

**7.6** Եթե ստանդարտի չեղյալ հայտարարումը հակասում է տեխնիկական հանձնաժողովի անդամի, իրավաբանական կամ ֆիզիկական անձի շահերին, ապա այդ անձը տեխնիկական հանձնաժողովի քարտուղարություն (ստանդարտացման ազգային մարմին) է ուղարկում ստանդարտը չեղյալ հայտարարելու աննպատակահարմարության վերաբերյալ հիմնավորում:

**7.7** Ստանդարտը չեղյալ հայտարարելուն համաձայն լինելու դեպքում տեխնիկական հանձնաժողովը, Ստանդարտների ազգային ինստիտուտ է ուղարկում տեխնիկական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ գրությանը կից հետևյալ փաստաթղթերը՝ մեկական օրինակից.

## ՀԱՏ 1.2-2013

- տեխնիկական հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստանդարտը չեղյալ հայտարարելու առաջարկությամբ, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե որ փաստաթուղթը պետք է գործի դրա փոխարեն կամ տեղեկատվություն առանց փոխարինելու ստանդարտը չեղյալ հայտարարելու մասին,

- նախկինում ստանդարտին համաձայնություն տված կազմակերպությունների հետ ստանդարտը չեղյալ հայտարարելու հնարավորության համաձայնեցումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները:

**7.8** Ստանդարտացման ազգային մարմինը 7.7-ում նշված փաստաթղթերն ուղարկում է Ստանդարտների ազգային ինստիտուտ՝ ստանդարտը չեղյալ հայտարարելու համար:

**7.9** Ստանդարտների ազգային ինստիտուտը ստանդարտը չեղյալ է հայտարարում հրամանով:

**7.10** Ստանդարտների ազգային ինստիտուտը չեղյալ հայտարարման վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրում է ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում և հրապարակում «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում՝ ստանդարտը չեղյալ հայտարարելու թվականից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ:

**7.11** Չեղյալ հայտարարման մասին տեղեկատվության հրապարակումից հետո այդ ստանդարտի ցանկացած տարածումն արգելվում է: Տեղեկատվության հրապարակումը՝ նոր նորմատիվ կամ տեխնիկական փաստաթղթեր մշակելիս, ինչպես նաև գործող փաստաթղթերը վերանայելիս (կամ դրանցում փոփոխություն կատարելիս) տվյալ ստանդարտի վկայակոչման դադարեցման հիմք է հանդիսանում:

**Հավելված Ա**  
**(հանձնարարելի)**

**Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի նախապատրաստումը, ձևավորումը**

**Ա.1** Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագիրը (այսուհետև՝ ստանդարտացման ծրագիր) մշակվում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքների համաձայնեցված քաղաքականության իրականացման, այդ աշխատանքների թեմատիկայի և կատարման ժամկետների որոշման, պլանավորվող տարում կատարվելիք ստանդարտացման աշխատանքների կոորդինացման, այդ աշխատանքներում պետական մարմինների, արտադրող և իրացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի շահագրգռվածության և նրանց աջակցման բացահայտման նպատակով:

**Ա.2** Ստանդարտացման ծրագիրն ընդգրկում է հետևյալ աշխատանքները.

- ազգային ստանդարտների մշակում (վերանայում, փոփոխությունների մշակում),
- Հայաստանի Հանրապետությունում միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման համար դրանց վերլուծություն և ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունում,
- Հայաստանի Հանրապետության կողմից մշակված միջազգային, տարածաշրջանային ստանդարտների վերանայում, փոփոխությունների մշակում,
- ստանդարտացման և համապատասխանության գնահատման կանոնների մշակում,
- տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգիչների մշակում (վերանայում, փոփոխությունների մշակում),
- գործող ազգային ստանդարտների ֆոնդի կատարելագործում, ներառյալ՝ դրանց վերանայումը, փոփոխությունների մշակումը,
- ստանդարտացման բնագավառում գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և այլ աշխատանքների կատարում:

**Ա.3** Ստանդարտացման ծրագիրը կարող է ընդգրկել.

- ա) նախորդ տարուց անցած և պլանավորվող տարում շարունակվող կամ ավարտվող աշխատանքներ,
- բ) պլանավորվող տարում սկսվող և ավարտվող կամ հաջորդ տարվան անցնող աշխատանքներ:

**Ա.4** Ստանդարտացման ծրագրում ներառվում են հետևյալ տարրերը.

## ՀԱՏ 1.2-2013

- տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող ազգային ստանդարտներ,

- կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական ստանդարտներ,

- արտադրանքի և ծառայությունների ստանդարտներ:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.** Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կատարումն ապահովող ազգային ստանդարտներ տարրում ներառվում են փորձարկումների համար նմուշառման, փորձարկման (որոշման, չափման) մեթոդների ստանդարտների մշակում:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.** Կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական ստանդարտներ տարրում ներառվում են.

- ազգային ստանդարտների համակարգերով՝ ստանդարտացման ազգային համակարգի, համապատասխանության հավաստման համակարգի, կոնստրուկտորական, տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգման և կողմնորման համակարգի ու այլ կազմակերպամեթոդական ստանդարտների մշակում,

- տերմինների և սահմանումների, հիմնարար ընդհանուր տեխնիկական ստանդարտների մշակում:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.** Արտադրանքի և ծառայությունների ստանդարտացում տարրում ներառվում են արդյունաբերության ճյուղերի ստանդարտների և դասակարգիչների մշակում:

**Ա.5** Ստանդարտացման ծրագիրը պետք է ընդգրկի հետևյալ տվյալները.

- աշխատանքի հերթական համարը,

- մշակվող ստանդարտի անվանումը

- ստանդարտի մշակման նպատակը և հիմքը

- կատարող տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը

- շահագրգիռ պետական կառավարման մարմինը

- հաստատման ներկայացման ժամկետը

**Ա.6 Ստանդարտացման ծրագրի ձևավորման կարգը**

**Ա.6.1** Ստանդարտացման ազգային մարմինը ծանուցում է ուղարկում պետական մարմիններին, տեխնիկական հանձնաժողովներին, շահագրգիռ այլ կազմակերպություններին՝ հաջորդ տարվա ստանդարտացման ծրագրում ընդգրկելու առաջարկություններ ներկայացնելու համար:

**Ա.6.2** Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման մասին ծանուցում ստացած պետական մարմինները, տեխնիկական հանձնաժողովները, մշակող, արտադրող, իրացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունները մինչև պլանավորվողին նախորդող

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

տարվա հոկտեմբերի 1-ը առաջարկություն են ներկայացնում ստանդարտացման ազգային մարմին՝ ստանդարտացման ծրագրի առաջին նախագծի նախապատրաստման համար:

Պետական մարմինները, տեխնիկական հանձնաժողովները, մշակող, արտադրող, իրացնող և շահագրգիռ այլ կազմակերպությունները առաջարկությունները ձևակերպում են ընդունված Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, դեկավար մարմինների առաջադրանքների, գիտական կազմակերպությունների համալիր հետազոտությունների արդյունքների հիման վրա:

**Ա.6.3** Ստանդարտացման ծրագրի նախագծի վերաբերյալ առաջարկությունները կազմում են ըստ Ա.1 նկարում տրված ձևի:

**Ա.6.4** Ներկայացրած առաջարկությունների հիման վրա ստանդարտացման ազգային մարմինը կազմում է ստանդարտացման ամփոփիչ ծրագրի նախագծի առաջին խմբագրությունը և մինչև պլանավորվողին նախորդող տարվա նոյեմբերի 1-ը այն ուղարկում է բոլոր շահագրգիռ մարմիններին՝ վերջնական քննարկման և համաձայնեցման:

**Ա.6.5** Շահագրգիռ մարմինները քննարկում են ստանդարտացման ամփոփիչ ծրագրի նախագիծը, ճշտում են իրենց ներկայացրած առաջարկությունները, որոշում են թեմատիկայում իրենց շահագրգռվածությունը և այլ աշխատանքներին իրենց մասնակցության ձևը:

Ստանդարտացման ամփոփիչ ծրագրի քննարկման արդյունքները ստանդարտացման ազգային մարմինն են ուղարկում պլանավորվողին նախորդող տարվա նոյեմբերի 20-ից ոչ ուշ:

**Ա.6.6** Ստանդարտացման ազգային մարմինը կազմակերպում է բացահայտված տարածայնությունների վերացման աշխատանքները, համաձայնեցված ստանդարտացման ծրագրի նախագծերի հիման վրա ձևակերպում է ստանդարտացման ամփոփիչ ծրագրի վերջնական խմբագրությունը, նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ բացահայտված տարածայնությունների վերաբերյալ կարծիքների ամփոփագիրը և ստանդարտացման ամփոփիչ ծրագրի նախագիծն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ քննարկման և հաստատման:

## **Ա.7 Ստանդարտացման ծրագրի ճշտման կարգը**

**Ա.7.1** Հաստատված ստանդարտացման ծրագրով նախատեսված աշխատանքների կազմը և կատարման ժամկետները թույլատրվում է ճշտել տեխնիկապես հիմնավորված դեպքերում, մասնավորապես՝ երբ.

- մշակումից և արտադրությունից հանվում են ոչ հեռանկարային կամ բարոյապես հնացած այն արտադրատեսակները, որոնց համար ստանդարտացման ծրագրով նախատեսված է ստանդարտների մշակում,

- մշակողից անկախ պատճառներով (չեն բավարարվել անհրաժեշտ սարքերի, սարքավորումների և այլնի մշակման և մատակարարման հայտերը) տեխնիկապես անհնարին է ստանդարտի մշակումը:

## **ՀԱՏ 1.2-2013**

**Ա.7.2** Ստանդարտացման ծրագրի փոփոխման՝ աշխատանքների հանման, կատարման ժամկետների հետաձգման և նոր աշխատանքների ավելացման առումով, ստանդարտացման ազգային մարմինը, շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա, ձևակերպում է հաստատված ստանդարտացման ծրագրի լրացումների ու փոփոխությունների նախագիծը և այն համաձայնեցնում է այն շահագրգիռ կազմակերպությունների հետ, որոնց հետ համաձայնեցվել է ստանդարտացման ծրագրի նախագիծը:

**Ա.7.3** Ստանդարտացման ծրագրի լրացումների և փոփոխությունների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ մինչև աշխատանքների սկսելը:

**Ա.7.4** Ստանդարտացման ծրագրի լրացումները և փոփոխություններն իրականացվում են ըստ օրենքով սահմանված կարգի և ձևի:

**Ա.8** Ստանդարտացման ծրագրի յուրաքանչյուր առաջադրանք ավարտվում է նորմատիվ փաստաթղթի (ստանդարտի, դասակարգչի կամ դրա փոփոխության) հաստատումով և գրանցումով կամ աշխատանքը դադարեցնելու մասին որոշումով:





	Մշակվող ստանդարտի անվանումը	Ստանդարտի մշակման նպատակը և հիմքը	Կատարող տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը	Շահագրգիռ պետական կառավարման մարմինը	Հաստատման ներկայացման ժամկետը
<b>1.Ստանդարտացման ոլորտը</b>					
1.					

Նկար Ա.1 - Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի առաջին էջի ձևը



## Հավելված Բ

(հանձնարարելի)

### Ստանդարտի նախագծի պարզաբանման կառուցումը, շարադրումը և բովանդակությունը

Բ.1 Պարզաբանման անվանման մեջ տրվում է ստանդարտի նախագծի լրիվ անվանումը, ստանդարտի նախագծի խմբագրության հերթական համարը:

Բ.2 Ստանդարտի նախագծի պարզաբանման մեջ ներառում են՝

- ստանդարտի մշակման հիմքը,
- ստանդարտացման օբյեկտի բնութագրերը,
- ստանդարտի գործարկման ժամկետը,
- փոխկապակցվածությունը ստանդարտացման այլ նորմատիվ փաստաթղթերի հետ,
- տեղեկատվական աղբյուրները,
- լրացուցիչ տեղեկություններ:

Բ.3 Պարզաբանումը կազմում են ստանդարտի նախագծի յուրաքանչյուր խմբագրության համար: Պարզաբանման մեջ արտացոլում են հիմնական ցուցանիշների նորմերը, բնութագրերի, պահանջների փոփոխությունները՝ նախորդ խմբագրությունների համեմատությամբ և դրանց հիմնավորումները:

Բ.4 «Ստանդարտի մշակման հիմքը» տարրում նշում են այն փաստաթղթի անվանումը, որի հիման վրա մշակվում է ստանդարտը, աշխատանքի հերթական համարը՝ ըստ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի: Եթե մշակվող ստանդարտն ընդգրկված չէ ստանդարտացման ծրագրում, նշում են ստանդարտի մշակման պայմանագրի համարն ու հաստատման թվականը:

Բ.5 «Ստանդարտացման օբյեկտի բնութագիրը» տարրում տրվում է ստանդարտացման օբյեկտի համառոտ բնութագիրը, ստանդարտի նախագծի ցուցանիշների, նորմերի, բնութագրերի ու պահանջների սահմանման հիմքերը.

- ստանդարտացման միջազգային կազմակերպության, միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի և ստանդարտացման այլ միջազգային կազմակերպությունների, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների պահանջներ,

- համասեռ արտադրանքի խմբի ստանդարտով սահմանվող ցուցանիշներ,

- ստանդարտացման օբյեկտի արտոնագրային հետազոտությունների արդյունքներ (անհրաժեշտության դեպքում),

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

- ստանդարտացվող արտադրանքի փորձնական նմուշների (փորձնական խմբաքանակների) փորձարկումների արդյունքներ (անհրաժեշտության դեպքում),

- գործնականորեն ստուգված հայրենական և այլ պետությունների հայտնագործությունների և գյուտերի վերաբերյալ տեղեկություններ,

- կատարված գիտահետազոտական, փորձանախագծային և փորձատեխնոլոգիական աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություններ (հաշվետվությունների վկայակոչումը՝ նշելով դրանց գտնվելու վայրը):

Բ.6 «Ստանդարտի գործարկումը» տարրում նշում են ստանդարտը Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնելու ենթադրյալ թվականը՝ հաշվի առնելով նախապատրաստական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ ժամանակը:

Բ.7 «Փոխկապակցվածությունը ստանդարտացման այլ նորմատիվ փաստաթղթերի հետ» տարրում նշում են.

- ստանդարտների համալիրին (համակարգին) ստանդարտի նախագծի պատկանելությունը, եթե ստանդարտը պատկանում է դրանց թվին,

- համասեռ արտադրանքի խմբի վրա տարածվող ստանդարտը, որին համապատասխան մշակվել է ստանդարտի նախագիծը,

- գործող ստանդարտները, այդ թվում՝ ստանդարտացման միջազգային կազմակերպության, միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի և միջազգային այլ կազմակերպությունների, տարածաշրջանային (եվրոպական, միջպետական) ստանդարտները, տեխնիկական պայմանները, որոնց հետ փոխկապակցված է ստանդարտի նախագիծը: Տրվում է նաև տեղեկություններ ստանդարտում վկայակոչված ստանդարտների կիրառման հետ կապված խնդիրների լուծման ուղղությունների վերաբերյալ,

- մշակվող ստանդարտի մշակման, ընդունման և գործողության մեջ դնելու արդյունքում գործող ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի վերանայման, փոփոխության կամ չեղյալ հայտարարման անհրաժեշտության մասին առաջարկությունների հիմնավորումը:

Բ.8 «Տեղեկատվական աղբյուրներ» տարրում նշում են ստանդարտի մշակման ժամանակ կիրառված տեղեկատվական աղբյուրները:

Բ.9 «Լրացուցիչ տեղեկություններ» տարրում, անհրաժեշտության դեպքում, ներառում են որոշ հարցերի լուծման տարբերակները և ստանդարտի նախագծի առանձին հարցերի վերաբերյալ գնահատման (կարծիքների) ուղարկված (ծանուցված) կազմակերպությունների հատուկ կարծիքները:

Բ.10 Ստանդարտի նախագծի պարզաբանման վերջին էջի վրա ստորագրում են տեխնիկական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

### Հավելված Գ

(տեղեկատու)

Ծանուցում ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման մասին

1

Մշակող

Տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի անվանումը

2

Ստանդարտացման

օբյեկտը՝

ՍԴ-ի

նշումով

արտադրանքի (աշխատանքի, ծառայության) անվանումը

3

Ստանդարտի

նախագծի

անվանումը

4 Համապատասխան միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտների դրույթներից տարբերող տարբերող դրույթները

5 Հրապարակային քննարկման ժամկետը \_\_\_\_\_

6 Նախագծի վերաբերյալ դիտողություններն ընդունվում են \_\_\_\_\_

փոստային հասցեն, հեռախոսը,

---

Էլեկտրոնային փոստի հասցեն

Կազմակերպության

ղեկավար

---

ազգանունը

ստորագրությունը,

անվանատառը,

կամ

Ֆիզիկական

անձ

---

ազգանունը

ստորագրությունը,

անվանատառը,

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**Հավելված Դ**

(տեղեկատու)

**Ծանուցում ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման  
ավարտի մասին**

1 Մշակող \_\_\_\_\_

Տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի անվանումը

2 Ստանդարտացման օբյեկտը՝ ՍԴ-ի նշումով \_\_\_\_\_

արտադրանքի (աշխատանքի, ծառայության) անվանումը

3	Ստանդարտի	նախագծի	անվանումը
---	-----------	---------	-----------

\_\_\_\_\_

4	Համապատասխան միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտների դրույթներից	կամ տարածաշրջանային ստանդարտների տարբերող	
---	--	---	--

դրույթները \_\_\_\_\_

\_\_\_\_\_

5	Ստանդարտի լրամշակված նախագծի և շահագրգիռ անձանց դիտողությունների պատճենները	կարելի է	ստանալ
---	---	----------	--------

\_\_\_\_\_

փոստային հասցեն, հեռախոսը,

\_\_\_\_\_

Էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքը



6 Ստանդարտի նախագծի մշակման մասին ծանուցումը հրապարակվել էր

---

թվականը (օրը, ամիսը, տարեթիվը)

Կազմակերպության  
ղեկավար \_\_\_\_\_

ստորագրությունը, անվանատառը, ազգանունը

կամ

Ֆիզիկական

անձ

---

ստորագրությունը, անվանատառը, ազգանունը

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**Հավելված Ե**

(հանձնարարելի)

**Ստանդարտի նախագծի վերաբերյալ կարծիքների ամփոփագրի ձևը**

**Կարծիքների ամփոփագիր**

---

ստանդարտի անվանումը

ազգային ստանդարտի նախագծի \_\_\_\_\_ խմբագրության:

նախագծի խմբագրության համարը

Հ/հ	Բաժինների, ենթաբաժինների, կետերի, ենթակետերի, առաջարկությունների համարը	Կազմակերպության անվանումը, նամակի համարն ու թվականը	Դիտողությունը և (կամ) առաջարկությունը	Մշակողի եզրակացությունը
1	2	3	4	5

Մշակման ղեկավար \_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրությունը

անվանատառը, ազգանունը

Կատարող \_\_\_\_\_

\_\_\_\_\_

## Հավելված 2

(հանձնարարելի)

### Ստանդարտի նախագծի կարծիքների ամփոփագրի կառուցումը, շարադրումը, ձևավորումը և բովանդակությունը

2.1 Ստանդարտի նախագծի վերաբերյալ ստացված կարծիքների հիման վրա տեխնիկական հանձնաժողովը կամ աշխատանքային խումբը Ե հավելվածում տրված ձևին համապատասխան կազմում է կարծիքների ամփոփագիր:

2.2 Կարծիքների ամփոփագրում դիտողություններն ու առաջարկությունները շարադրում են հետևյալ հաջորդականությամբ.

- ամբողջությամբ ստանդարտի նախագծի վերաբերյալ,
- նախաբանի վերաբերյալ,
- ստանդարտի ընդհանուր բաժինների վերաբերյալ,
- ստանդարտում շարադրված պահանջների վերաբերյալ,
- ստանդարտի նախագծի պարզաբանման վերաբերյալ:

2.3 Կարծիքների ամփոփագրի 3-րդ սյունակում նշում են կարծիք ուղարկող կազմակերպության լրիվ անվանումը, նամակի համարը և թվականը:

2.4 Կարծիքների ամփոփագրի 4-րդ սյունակում տրվում է յուրաքանչյուր դիտողության և առաջարկության բովանդակությունը: Միատիպ դիտողություններն ու առաջարկությունները խմբավորում են մեկ դիրքում՝ նման դիտողություններ ուղարկած բոլոր կազմակերպությունների ցանկով:

2.5 Կարծիքների ամփոփագրի 5-րդ սյունակում տրվում է յուրաքանչյուր դիտողության և առաջարկության վերաբերյալ ստանդարտի նախագիծը մշակողի եզրակացությունը՝ համապատասխան հիմնավորումով.

«Ընդունված է», եթե դիտողությունը և (կամ) առաջարկությունն ընդունվում է լրիվ,

«Ընդունված է մասամբ», եթե դիտողությունը և (կամ) առաջարկությունն ընդունվում է ոչ լրիվ: Այնուհետև տրվում է դիտողության և (կամ) առաջարկության չընդունված մասի մերժման հիմնավորումը և ստանդարտի նախագծի նոր խմբագրության կետի համարը, որտեղ հաշվի է առնված այդ դիտողությունը և (կամ) առաջարկությունը,

«Ընդունված է ի գիտություն», եթե մշակողը համաձայն է դիտողությանը և (կամ) առաջարկությանը, բայց այն տվյալ ստանդարտի նախագծին ուղղակի չի առնչվում,

«Անընդունելի է», եթե առաջարկությունը և (կամ) դիտողությունը չի ընդունվում:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

Այնուհետև շարադրում են անընդունելի դիտողությունները և (կամ) առաջարկությունները չընդունելու հիմնավորումը:

**Հավելված Է**

(հանձնարարելի)

**Ստանդարտացման ազգային մարմնի հրամանի ձևը**

ստանդարտացման ազգային մարմնի անվանումը

Հ Ր Ա Մ Ա Ն

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերության

Տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի անվանումը և համարը թվականը  
նիստի N\_\_\_ արձանագրությունը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել և \_\_\_\_\_ գործողության մեջ դնել հետևյալ ազգային  
թվականը ստանդարտները՝  
գործողության մեջ դնել ՀՍ

ստանդարտի(ների) նշագիրը(երը) և անվանումը(ները)

2. \* \_\_\_\_\_-ից Հայաստանի Հանրապետությունում դադարեցնել (չեղյալ  
հայտարարել)

ստանդարտի(ների) նշագիրը(երը) և անվանումը(ները)

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել

պատասխանատու անձի պաշտոնը, անվանատառը, ազգանունը

\* Լրացվում է չեղյալ հայտարարվող ստանդարտների առկայության դեպքում:

Ստանդարտացման ազգային

մարմնի ղեկավար

ազգանունը

\_\_\_\_\_

ստորագրությունը

\_\_\_\_\_

անվանատառը,

## **Հավելված Ը**

(տեղեկատու)

### **Ստանդարտի օրինակներում փոփոխություններ և ուղղումներ մտցնելու կարգը**

Թ.1 Օգտվողի մոտ, գրադարանում կամ գիտատեխնիկական տեղեկատվության ֆոնդում գտնվող ստանդարտների օրինակում փոփոխությունը (ուղղումը) մտցնելու համար «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուի մեջ հրապարակված տվյալ փոփոխության (ուղղման) տեքստը բազմացնում են պատճենահանման ցանկացած եղանակով և սոսնձում (կամ որևէ այլ եղանակով հուսալիորեն ամրացնում) ստանդարտի առաջին էջում:

Թ.2 «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուի այն օրինակը, որի հիման վրա ստանդարտների մեջ մտցվել են փոփոխությունները (ուղղումները) թողնում են ստանդարտից օգտվողի մոտ՝ որպես հսկիչ օրինակ: Հսկիչ օրինակի առաջին էջի վրա դնում են «Հսկիչ օրինակ» դրոշմը (կամ կատարում են գրառում): Տեղեկատուի հսկիչ օրինակը պահում են կազմակերպության այն ստորաբաժանումում, որն իրականացնում է ստանդարտների հսկիչ օրինակների հաշվառումն ու պահումը:



## Մատենագիտություն

[1] «Ստանդարտացման մասին» 2012 թվականի մարտի 5-ի ՀՕ-21-Ն Հայաստանի Հանրապետության օրենք

## ՀՍՏ 1.2-2013

**Հանգուցային բառեր.** ազգային ստանդարտ, մշակում, համաձայնեցում, ընդունում, հաստատում, պետական գրանցում, հրատարակում, նորացում, վերանայում, փոփոխություն, ուղղում, չեղյալ հայտարարում

---

**ՍԴ 01.120**

Գինը սահմանվում է 41 էջի համար